կը մնան, ապասելով թերեւս նոր Շէյխի մը։
ՊԱՀԼԻՒ

ՎԻԵՆԱ. — «Անահիտ», թիւ 2, էջ 90, սիւն. ա., տող 2 «Դամասկոս, Թարապլուս», պէտք է ըլլայ՝ «Դամասկոս, Թարապլուս»։ — Թիւ 4, սիւն. բ., տող 31 «հայ գիւղեր» պէտք է ըլլայ «չատ գիւղեր»։ — Թիւ 7, երես 147, սիւն. բ., տող 4 «չբղներ» պէտք է ըլլայ «կը գնէր»։

ՔՐՈՆԻԿ

—

Պ. ՄԱՆԹԱՇԵԱՆ ԵՒ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ՄԱՏՈՒՈՒՄԸ. — Փարիզի Հայոց մատուռը, որուն ծախքերը պ. Մանթաշեան ստանձնած է ըսկսաւ արդէն շինուիլ։ Գործը յանձնուած է ծանօթ ֆրանսացի հարտարապետ պ. Կիլպերի, որ իր յատակագիծը պատրաստած է հայկական հին եկեղեցիներուն, մասնաւորապէս Աղթամարի եկեղեցւոյն ճարտարապետական ոճին հետեւողութեամբ։

Ծրանսական կառավարութիւնը, գնահատելով ծառայութիւնը զոր պ. Մանթաշեան կը մատուցանէ Փարիզի՝ անոր պարգեւելով «նոր» դիզեցկութիւն մը, Պատուոյ Լէգէոնի խաչը նուիրեց իրեն։

Պ. ԱՐՓԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Ի ՓԱՐԻԶ. — Պ. Արփար Յովհաննիսեան վերջերս եկաւ քանի մը շաբաթ անցընել Փարիզ։ Պ. Յովհաննիսեան մին է այն հայ գործիչներէն որոնք, առանց ժխորի, ամենակենսական եւ բազմագիմի ծառայութիւններ մատուցած են իրենց ազգին։ Նուրբ ու զարգացած գրասէր, ողջամիտ ու սրամիտ հրապարակագիր, պ. Յովհաննիսեան հիմնած ու վարած է ասանոնք «Փորձ»ը, այս սիրելի ամենէն ճոխ, ամենէն ճաշակաւոր, ամենէն հմայիչ հրատարակութիւններէն մէկը զոր Հայերն ունեցած են, ինչպէս եւ «Արմաւենի»ը։ ասոնցմէ զատ Յովհաննիսեան առաջին լուրջ ձեռնարկը կատարած է Հայոց արդի գրականութիւնը Եւրոպացւոց ճանչցնելու։ իր հիմնած Armenische Bibliothek-ը, որուն մէջ յոյս տեսած են Ալիշանի, Ի. Պատկանեանի, Մկրտիչ Պէշիքթաշլեանի եւ այլ նոր հայ գրագէտներու՝ գործերը գերմաներէնի թարգմանուած, ամենախոյակ ծառայութիւններէն մէկն է զոր հայ գործիչ մը մատուցած ըլլայ իր ցեղին։ Այժմս այնքան է դարձեալ որ հիմնեց վերջերս «Հանդէս Հայագիտութեան» անունով գիտնականներէն ամագիր մը, որ կ'երեւայ Մարպուրկի մէջ եւ կը հրատարակէ հայ ու եւրոպացի գիտուններու աւանդաբերութիւնները Հայոց պատմութեան, լեզուին ու գրականութեան վրայ։ Ամբ օրերս, պ. Յովհաննիսեան հրատարակէ Փարիզի մէջ Բաֆֆիի «Խոցփուչ»ին եւ «Պիպի-Շարաբանի»ին ֆրանսերէն թարգմանութիւնը, — թարգմանութիւն մը շատ վայելուչ ու ճաշակաւոր։

Ծրանսական կառավարութիւնը, գնահատելով այդ ծառայութիւնները զոր պ. Յովհաննիսեան մատուցած է ֆրանսական քաղաքակրթութեան տարածմանն ի կողմէ, «Բալմ աքատեմիք»ի պատուանշանը շնորհեց իրեն։

Պ. ՏԻԳՐԱՆ ՄԱՆ ՓԵԼԷԿԵԱՆ. — Փարիզի լրագիրները ծանուցին թէ Շահը պարսկական հնութեանց ծանօթ վաճառական պ. Տիգրան խան Փէլէկեանը Նիւ-Եորքի պարսկական հիւպատոս անուանած է։

«ՓԱՎՔՍԱՖԻ ՎԱՍՈՆԻՒ». — Կ'իմանանք Փիքիքի լրագիրներէն թէ պ. Դ. Մելիք-Կարագէօզեան գներ է «Լաւքսաքի Վասոնիք» ամսագիրը եւ զայն պիտի հրատարակէ այսուհետեւ իր անօրէնութեամբ։

ԱՐԿՈՆԱԼԻՊ. — Կոլկասի թերթերը հաղորդեցին նաեւ թէ պ. Ռուբէն Յովհաննէսեան, պ. Աբգար Յովհաննէսեանի որդին, մտադիր է ի մօտոյ հրատարակել, իր անօրէնութեամբ, «Արկոնաւոդ» չաբաթաթերթը՝ ռուսերէն լեզուով։

Պ. ՊԷՔԷՐՃԵԱՆ ԵՒ ԷՋՄԻԱՆԻ ՎԵՀԱՐԱՆԸ. — Հաճոյքով իմացանք որ պ. Մ. Պէգիրճեան հրատարակած է Արիմեան Հայրիկէն, Էջմիածնայ հաղարմեցնարիրամեակի տօնին համար Վեհարանին հիւրասիրը որմնադարձելու։ Պ. Պէգիրճեան ուժ մը է, որ տարիներէ ի վեր չէ գրցած ինքզինքը լիովին արտայայտել, խրախոյժ եւ ազգութեան պակասին պատճառով։ Կը մաղթենք որ Էջմիածնայ, ինչպէս եւ ամբողջ Կովկասի մէջ՝ ուր պատայ մը պիտի ընէ, պ. Պէգիրճեան գտնէ իր տաղանդը եւ իր ծրագիրներն բմբռնող ու խրախուսող անձեր, որպէս զի իր կերդողութիւնները լիակատար արտայայտութեամբ մը երեւան գան վերջապէս։ Պ. Պէգիրճեան ատենով Զբրագանի պալատին բոլոր որմնադարդերը յօրինած, կարասիներուն ձեւը գծած է, եւ Սուլթան Սգիզ գինքը լայնօրէն գնահատած եւ քաջալերած է։ ամօթ պիտի ըլլար որ տաճիկ վեհապետէ մը գնահատուած եւ քաջալերուած հայ արուեստագէտ մը իր ազգակիցներէն չգտնէ աջակցութիւնը որուն պէտք ունի եւ իրաւունք ունի։

digitised by A.R.A.R.@